5. Դատական ծախսեր.

ՔԴՕ 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՔԴՕ 108-րդ հոդվածի համաձայն. «1. Դատական ծախսերի հետ կապված պահանջները ներկայացվում են բացառապես տվյալ գործի շրջանակներում:

2. Գործին մասնակցող անձանց կրած, ինչպես նաև վճարման ենթակա դատական ծախսերի փոխհատուցման հարցը լուծելիս դատարանը հիմք է ընդունում միայն գործում առկա փաստաթղթերով հիմնավորված ծախսերը:»:

ՔԴՕ 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Անդրադառնալով սույն գործով հատուցման ենթակա դատական ծախսերին, Դատարանն արձանագրում է, որ հայցի մերժմամբ պայմանավորված դատական ծախսերը պետք է կրի Հայցվոր կողմը և հաշվի առնելով պետական տուրքի վճարված լինելը, դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Հայցի ապահովման հարցի լուծումը.

Դատարանը 08.02.2023թ. կայացրել է հայցի ապահովման միջոցներ կիրառելու մասին Հայցվորի միջնորդությունը մասնակի բավարարելու մասին որոշում:

ՔԴՕ 136-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցը մերժելու մասին վճիռ կայացվելու դեպքում հայցի ապահովման միջոցները պահպանվում են մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը:

Սույն դեպքում հաշվի առնելով հայցի մերժումը, Դատարանը գտնում է, որ կիրառված հայցի ապահովումը ենթակա է վերացման վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից:

Ելնելով պետությունից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-189.1-րդ, 191-192-րդ, 198-րդ, 234.12-րդ հոդվածներով՝

ՎՃՌԵՑ

1. Թիվ [illegible]/2541/02/23 քաղաքացիական գործով «Ջատեգշին» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ մերժել:

2. Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

3. Դատարանի 08.02.2023թ. որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը, այն է՝ «Արգելել «Ձորակ» հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ին և լիազորված մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը թիվ Ձորակ ՊՈԱԿ-ԳՀԾՁԲ-22/1-Շին ծածկագրով մրցույթի արդյունքում [illegible].08.2022թ. կնքված պայմանագրի շրջանակներում «Ջատեգշին» ՍՊ ընկերության գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում [illegible] ընթացակարգ նախաձեռնելը, իսկ նախաձեռնված լինելու դեպքում՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում [illegible] մինչև սույն գործով եզրափակիչ դատական ակտի կայացումը», պահպանել մինչև վճռի օրինական ուժի մեջ մտնելը և այդ պահից վերացնել:

4. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակելու պահից և կարող է բողոքարկվել [illegible] քաղաքացիական դատարան՝ հրապարակվելու օրվանից մեկամսյա [illegible]:

ԴԱՏԱՎՈՐ՝ ԴԱՆԻԵԼ ՄԽԵՅԱՆ